
637 առ Հերակլեաւ կայսերաւ։ — Ի մոխց Նորա կայ Տէ՛ր կամ Տիկոր գիւղ՝ի գոգս լերանց, հընագոյն ևս եկեղեցեաւ, որոյ և ձև գոյզն ինչ զանազանի յայլոցն, զի գմբեթին յածագոյն և լայնագոյն է, և կրկնայարկ մատրունքն կամ աւանդատունք արտաքս քան զորմն սաճարին էլեալք, որոյ երկայնութիւն է 68՛ և լայնութիւն 36՛. և է շինեալ՝ի Սահակայ Կամսարականէ, որպէս Թուի՝ի կէս Զ դարու։ — Ի հարաւոյ մոխց Տեկոռայ կիսաժամու հեռի կայ Աղթամար կամ Լգբեի գիւղ, կրկին հին եկեղեցեաք յորոց մին գմբեթաւոր և կանգուն կայ 1006 Թուականաւ, այլ շինածն հնագոյն ևս է։ — Կշիռ յարևմտից Տիկոռայ կայ Խնձոփ գեօղ, այժմ Պէշ-Բիլիճ կոչեցեալ վասն հնգեցուն գեղեցիկ եկեղեցեացն կանգնելոց՝ի Վեսան Սարգսէ, յեզր խորանգունդ ձորակի ուրեմն, ընդ որ անցանէ հեղեղատ. ամենեքեան փոքունք գմբեթաւորք և անաղարտ ճեպացեալք, ՝ի գեղնափայլ քարանց կերտեալք. մեծագոյն եկեղեցեացն Ս. Սարգիս բոլորշի արտաքուստ և բոլորաթև խաչաձև՝ի ներքոյ՝ շինեալ է յամին 1033, ունելով 38՛ ընդ երկայնն և 34՛ ընդ լայն. երկրորդն բազմանկիւն բոլորակ է արտաքուստ, խաչաձև բոլոր՝ի ներքոյ 28՛ ընդ երկայնն և ընդ լայն։ Իսկ այլքն սովորական քառանկիւն ձևով։ — Ի հարաւոյ սոցա են Ծոպնի և Նախճաւան գեօղք կիսաւեր եկեղեցեօք։



Ս. Գէորգ. մերձ ՅԱՆԻ. — Chapelle aux Tombeaux des Rois d'Ani.

42. Ի հիւսիսոյ կուսէ Անւոյ և Շիրակաւանայ ժամաւ հեռի՝ի սմանէ կայ Թիփնէ գիւղ, յորում ամրոց հին կառուցեալ՝ի գեղադիտակ բարձրաւանդակի, բարձր պարսպօք քառակուսեօք և ուժգին աշտարակօք. կրկնայարկ կամարակապ է, այլ կիսակործան։ — Յարևմտից սորա ժամաւ հեռի կայ Արգինա գիւղ՝ի գաշտի պարսպելոյ բլրոք. ՝ի սմա խաչկայ կաթուղիկոսի կանգնեալ էր եկեղեցիս չորս և անգ վաթոռն եդեալ. միոյն միայնոյ այժմ երևին քայքայեալ որմունք, և մասն մի մեծի կաթուղիկէին, յորում նշխարի և Թուական ՆԿԱ (1012). գոն և այլոց շինից դերբուկք, ոլք և զհայրապետանոցին տեղի Թուին ունել։ — Ի հարաւոյ մոխց Արգինայ կայ Մէնէրէի գիւղ, և՝ի քառաժեռս նորա փոսալոք և ձիթահանք. և եկեղեցիք՝ի նմա, յորոց մին անեղծ և անվնաս կայ առ վաղուի միւմ, արձանագրեալ՝ի ՈՀԲ (1228)։ Կայ միւս այլ գիւղ Մէնէրէի Նախճաւանայ յարևմտից Ղօղլիճայ, երկոքին ևս յիշեցուցանեն զանուն Մօրկայ, այն է Մաւրիկ կայսեր որ էր աղգաւ Հայ յՕշականայ (134), յեզր Զ դարու, և ետ առնել շինուածս՝ի կոմմանս յայսոսիկ։ — Մերձ է՝ի Մէվլեկ և Օղուզ կամ Ո-ղ-ուզի գիւղ, հոյակապ գմբեթաւոր եկեղեցեաւ, որ աղեղնաձև Թևս ունի՝ի ներքուստ, նորոգեալ յամին 1001 (ՆԾ), շինեալ գարու յառաջ՝ի Հասանայ Գնթունւոյ "նախօրի-նակ վերինն Երուսաղէմի,, որպէս ասէ արձանագիր նորա գեղեցիկ։ — Ժամաւ և աւելի յարևմտից հիւսիսոյ Մէվլեկայ կայ Քի-ւէկ-փէրէ գիւղ, ուր Ճակատեալ էին Ռուսք՝ի սկիզբն օգոստոսի 1854 տարւոյ, և բախեալ ընդ Օսմանեանս՝ պատերազմին աՀասւոր մղեցաւ ժամն վեց յ'80,000 ընդդիմամարտից, և ընկրկեցան Օսմանեանք՝ի Ղարս. իսկ Ռուսաց հրձիգ արարեալ զբոլկայ վայրն՝ գարձան անցին ընդ Ախուրեան՝ի բաժին իւրեանց։ — Ի հարաւոյ արևմտից սորա է Հաճիվէնի գիւղ, ուր զառաջինն բանակեալ էր Օսմանեանց, և անտի յարձակեալ՝ի